

ԵՂԵԳՈՒՆ ՓՈԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

1-2 (135-136) հունվար - փետրվար, 2018



«Եղեգան փող»-ի հարցերին պատասխանում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադիր տնօրեն բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սերգո Հայրապետյանը**:

2017թ. սեպտեմբերին մեծ հանդիսությամբ նշեցիք ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման 20-ամյակը: Որո՞նք են Կենտրոնի կարևոր ձեռքբերումներն ու նվաճումները:

-Ստեղծման օրից կենտրոնի գործունեության առաջնահերթություններից է Շիրակի հնագիտական և պատմագագրական հուշարձանների ուսումնասիրությունը: Նախ հստակեցվեցին պատմական գավառի հնագիտության, ճարտարապետության, հին ու նոր պատմության, ազգագրության և բանահյուսության գիտական հետազոտման մեջ կենտրոնի առաջնահերթությունները, նրա գիտական ներուժի իրատեսական հնարավորությունները, պատվի գործ համարվեց հետազոտական աշխատանքի բարձր որակի ապահովումը պետական ֆինանսավորմամբ իրականացվող թեմատիկ ծրագրերում, որոնք կատարվում են ամենայն բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ: Դրանք արժեքավոր հետազոտություններ են՝ նվիրված Բենիամինի անտիկ դամբարանադաշտի ու բնակավայրի, Հայկաձորի և Մեծ Սեպասարի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություններին, գիտականորեն հիմնավորված համարձակ հարցադրումներ են մ. թ. ա. առաջին հազարամյակում Ախուրյանի ավազանի հնագույն բնակչության էթնիկ խմբերի, նրանց պաշտամունքի, առասպելական պատկերացումների, հավատալիքների, հնդեվրոպական հոգևոր ժառանգության, ցեղային երկրների տեղադրման խնդիրների շուրջ, նաև հանգամանակից ուսումնասիրություն Ալեքսանդրապոլի գավառի նորագույն շրջանի XIXդ. պատմաժողովրդական դրության մասին: Դրանք ուշագրավ ու մանրակրկիտ ուսումնաքննություններ են Շիրակի ավանդական բանահյուսության, ծիսատոնական համակարգի ու դրանց նորոգյա փոխակերպումների վերաբերյալ, աղետի հոգեբանության արդիական խնդիրների, աղետյալ ազգաբնակչության հոգեկարգավորման գործընթացի մեխանիզմների մշակման շուրջ, XIX-XXդդ. Շիրակի տնայնագործության, արհեստների, տնտեսական զբաղմունքների ու տնտեսության օժանդակ

դակ ձևերի մասին, Ալեքսանդրապոլ-Լեհնական-Գյումրու պատմագագրական ուսումնասիրության ծիրում ազգագրական հարուստ նյութ ունեցող քաղաքի էթնիկ կազմի, կենցաղի, կենսաապահովման, վերջին երկու հարյուրամյակի ընթացքում էթնոժողովրդագրական ու մշակութային զարգացումների մասին, Շիրակի ժողովրդական ու մասնագիտացված երաժշտարվեստի պատմության, նրա ժանրային, լեզվական ու տաղաչափական հիմնախնդիրների, ժողովրդական երգի քաղաքային ավանդույթների ու զարգացման արդի միտումների վերաբերյալ և այլն: Կենտրոնում սկզբից ևեթ կարևորվեց սեփական տպագիր խոսք ունենալու անհրաժեշտությունը: Որոշվեց տարին մեկ անգամ հրատարակել կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուն՝ 14 հրատարակչական մամուլ ծավալով, բարձր որակով ու գիտական պատշաճ մակարդակով: Այսօր հրապարակի վրա են հանրապետության գիտական շրջանակներում արդեն բարի համբավ վայելող և սպասված այդ հանդեսի 20 հատորները: Իհարկե, կենտրոնն այլ հրապարակումներ ևս ունի: Դրանք տարբեր գիտաժողովների, գիտական սեմինարների ու միջոցառումների նյութերն են, թեմատիկ հաշվետվությունները: Թեև դեռևս դանդաղ տեմպերով, սակայն սկիզբ է առել այս տարիների ընթացքում ավարտված հիմնարար ուսումնասիրությունների հրատարակումը: 1998-ից մինչ օրս Շիրակի Հայագիտական նաև Գյումրիում ավանդաբար գումարվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական խոշորամասշտաբ և հեղինակավոր գիտական նստաշրջանների կազմակերպիչն ու պատասխանատուն է, գիտաժողովներ, որոնք ակնառու երևույթ են ոչ միայն Գյումրու, այլև հանրապետության գիտական ու մշակութային կյանքում:

-Հայագիտության զարգացման միտումները Սփյուռքում:

-Արտերկրի հայագիտական կենտրոններն իրենց գործունեությամբ նպաստում են հայապահպանությանը Սփյուռքում: Եկեղեցիների, դպրոցների, մամուլի և այլ կառույցների կողքին դրանք այն հաստատություններն են, որոնք համախմբում են հայերին արտերկրի համայնքներում և դրանց հաղորդում ազգային նկարագրին համապատասխան գիտելիքներ: Մասնավորապես, արտերկրի բազմաթիվ համասարանների շրջանակներում գործող հայագիտական կենտրոններում ուսանում են մեծ թվով հայ երիտասարդներ, որոնք այդ կերպ սովորում են հայոց լեզու, ծանոթանում են հայոց պատմությանը, գրականությանը, մշակույթին, արդիականությանը: Հայագիտական կենտրոններում երբեմն ուսանելու են գալիս անգամ այնպիսի հայ երիտասարդներ, որոնք չեն տիրապետում հայերենին: Ուսանելու ընթացքում ձեռք բերած գիտելիքները հայոց լեզվի, հայոց պատմության, հայկական մշակույթի և առհասարակ Հայաստանի ու հայության վերաբերյալ ամրապնդում են սփյուռքահայերի ազգային ինքնագիտակցությունը և այդ կերպ նպաստում հայապահպանությանը Սփյուռքում:

Ունենալով հստակ հայագիտական ուղղվածություն՝ այդ կենտրոններն իրենց գործունեությամբ կամա թե ակամա իրենց նպաստն են բերում աշխարհում հայագիտության զարգացման գործին: Այս առումով անուրանալի է Մխիթարյան միաբա-

նության, Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայագիտության ամբիոնի և այլ հայագիտական կառույցների դերը:

-Առաջիկա ծրագրերը՝ որպես հայագիտության զարգացման խթան:

-Շիրակը Հայաստանի պատմական այլ գավառների նման, հոգևոր և նյութական մշակույթի անսպառ զանծեր ունի՝ հնագիտական ու պատմական մեծարժեք հուշարձաններ ու անհատակ անցյալ, դարերով ձևավորված ազգագրական գույներով ինքնատիպ գամմա ու անկրկնելի բանահյուսություն, անզուգական կենցաղ ու դարերի խորքից եկող ավանդույթներ, զարմանահրաշ ճարտարապետություն ու նկարչություն, բազմազան արհեստներ ու զբաղմունքներ, ժողովրդական մեծարվեստ երգ ու երաժշտություն և մեր բազմադարյա մշակույթի այլ ձեռակերտ գոհարներ, այլ խոսքով՝ պատմամշակութային ծովածավալ ժառանգություն, որի կրողն ու փոխանցողը մեր ժամանակակիցն է: Նրան է բախտ վիճակվել շարունակել այդ գանձերի մերօրյա ուսումնասիրությունը: 1997 թվականից այս ազգաշահ գործին է լծված Շիրակի հայագիտականը՝ իր հավակնոտ ու համարձակ գիտական ծրագրերով: Այսպես. առաջիկա տարիներին ուշադրության կենտրոնում կլինի ևս երկու նորահայտ հնագիտական հուշարձանների՝ Ջրածորի վաղբրոնգի-երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի ամրոց-բնակավայր-դամբարանադաշտ համալիր հնավայրի և Եղբաջուրի վաղբրոնգիդարյան նորահայտ բնակավայրի ուսումնասիրությունը: Առհասարակ, կենտրոնի

դային իշխանության մարմինների ստեղծման, գործունեության և այլ վիճահարույց հարցերին:

Կենտրոնի հեռանկարային ծրագրերի մեջ ուրույն տեղ ունի նաև Ալեքսանդրապոլ-Լեհնական-Գյումրի պատմագագրական ծավալուն հետազոտությունը նվիրված քաղաքի լեհնականյան ժամանակահատվածի ազգագրական դիմագծի ամբողջացմանը, տնտեսական կյանքի, հայրենադարձության նշանակության ու ժողովրդագրական տեղաշարժերի, քաղաքի արդյունաբերականացման, քաղաքային արհեստների ու տնտեսական զբաղմունքների արդի փոխակերպումների, գյուղական բնակչության դեպի քաղաք միգրացիայի, տարածաշրջանի 20-րդ դարի երկրորդ կեսի ժողովրդագրական իրադրության, անցկացված մարդահամարների, բնակչության սոցիալական կազմի փոփոխությունների, բնակչության թվի շարժման, զբաղվածության և այլ հարցեր: Սկիզբ է առել ժողովրդական ծեսերի ու տոների ժամանակակից փոխակերպումների ուսումնասիրությունը՝ դրանց պահպանման ու թարմացման արդյունավետ լուծումների առաջադրման նպատակով: Հրատարակվում է կենցաղավարող տոնածիսական արարողություններին նվիրված գիտաճանաչողական բնույթի գրականություն, կազմակերպվում են մարզի տարածքում նպատակային ազգագրական գիտարշավներ՝ նպատակ հետապնդելով առաջիկա հինգ տարիների ընթացքում ավարտել և հրատարակել մարզի բնակավայրերի պատմամշակութային ատլասը:




հնագետների խմբի կողմից կատարված և ընթացող բոլոր հետազոտություններն էլ ունեն արդյունավետ ընթացք, արդիական են, կարելի է ասել՝ նոր խոսք են արդի հայ հնագիտության բնագավառում և քննության առնված բազմաթիվ (այդ թվում՝ հարակից) հարցերի գիտական հանգամանակի մեկնաբանումների շնորհիվ նաև հեռանկարային են:

Վերջին շրջանում սկիզբ է առել նաև տարածաշրջանի՝ 1921-1940 թթ. քաղաքական պատմության ուսումնասիրությունը, որով նորովի անդրադարձ է կատարվում Ալեքսանդրապոլի (Լեհնական) գավառում խորհրդային իշխանության հաստատման և ամրապնդման, տեղական խորհուրդների ընտրությունների, խորհր-

Այս համատեքստում առանձնակի արժևորվում է նաև Կենտրոնի ազգագրագետների ջանքերով Գյումրիում արդեն ավանդական «Հացի տոն»-երի, ազգային խոհանոցի ցուցադրանքների, Տյառնընդառաջի և այլ տոների համաքաղաքային տոնահանդեսների կազմակերպումը՝ որպես տոնածիսական արարողությունների պահպանման և քարոզման արդյունավետ միջոց:

Նշենք, որ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը շարունակում է հայրենական գիտության տաճարի իր համեստ սպասավորությունը՝ հարստացնելով գիտական նվաճումների հայրենական զանգարանը, իր նպաստը բերելով ազգային ոգու ու ավանդույթների պահպանմանն ու հարստացմանը:



Կարո՞ղ եք գաղափար ունենալ առյուծի մեծահոգության մասին, երբ նա իր կատաղության մեջ միայն վանդակի երկաթներին է զարկվում...:
Լեն Կամսար

Երբ բացված են բռնի ուժով փակված դռները, լռելն այլևս անմիաստ է: Ճակատագրի կամոք, գուցե ես ամենեւին էլ ոչ, ինձ հանձնվեցին կամսարյան երգի-ծանքի խորքը տանող դռների բանալիները: Եվ ես սկսեցի ապրել գրողի բոլոր մտքերով, էջերով, ապրել ստեղծագործական գյուտի արդյունք-բերկրանքը՝ թան-գարանային մեկ ճմուշից մեկ-երկու միտք վերծանելու գիտական հաճույքը, երգիծաբանի մտքի ամեն մի տողատակը բացահայ-

«ԱՌՅՈՒԾԻ ՄԵԾԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԳԱՂԱՓԱՐԸ` ՀՈՇԱՓԵԼԻ...

«Լեն Կամսարի օրագրային արձակը»

տելու հույզերը, սարսռալ նրա գրչի դիպուկ ու համարձակ հարվածից... Սկսեցի հավատալ մեծ եւ կարեւոր գործին, եւ մտքերս ու գրիչս դարձան նվիրումս Լեն Կամսար մարդուն, քաղաքացուն եւ երգիծաբանին:

Այս ամենը իբրեւ սկիզբ:

Երբ դեռ ուսանողական մատարանին հենված ես խորհում այս կյանքում յուրաքանչյուրի առաքելության մասին, այլ է. այլ է, երբ թեկնածուական ատենախոսությանդ տողերն ես արդեն հազարերորդ անգամ վերընթերցում անգիր արածի պես, եւ բոլորովին մեկ ուրիշ զգացողություն է, երբ կամսարագիտության մեջ առաջին գիտակցված քայլն ես անում եւ քեզանից սիրով ու ջերմությամբ հեռացնելով /չեմ ասում՝ օտարելով/ ամեն ինչ դարձնում ես նաեւ բոլորինը, յուրաքանչյուրինը, Լեն Կամսարի խոսքի ու գործի նվիրյալինը, հայինը:

Ահա այսպես, փոքր-ինչ շեղվելով խոսքիս գիտական ուղղվածությունից, մտովի հետ գնացի մի քանի տարով: Իսկ մի քանի ամիս առաջ հասկացա, որ այն, ինչը պետք է բոլոր նրանց, ում աչքերը հիացմունքից ու զարմանքից ակամա փայլում են, երբ լսում են երգիծաբանի անու-

նը, որոշակի սկզբունքով համակարգի բերված արդեն իսկ ունեն ձեռքիս տակ եւ պարտավոր եմ դարձնել հանրության սեփականությունը: Խոսքս, իհարկե, բառացիորեն վերջերս տպագրված իմ գիտական աշխատությանն է վերաբերում, որը կրում է «Լեն Կամսարի օրագրային արձակը» խորագիրը:

2018-ը հորելյանական է մեծ երգիծաբանի համար. լրանում է ծննդյան 130-ամյակը: Գրողն արժանի է այն ամենին, ինչին ակամատես կլինեմք այս տարում: Մեկնարկն արդեն այս մեծագրությամբ տրված է:

Գրքի բովանդակության մասին երկար խոսել չեմ ցանկանում, քանզի կարելու է, որ այն հետաքրքրի եւ ձգի ընթերցողին այնպես, ինչպես Լեն Կամսարի գործերն են: Բայց եւ մի փոքր բացեմ փակագծերը: Գիրքը երեք գլուխներից է բաղկացած եւ Յավելվածից: Այն օրերին, երբ խորհում էի ատենախոսությունս գրքի վերածել, կրկին ու կրկին թերթեցի գրողի բոլոր տպագրված օրագրերը եւ հասկացա, որ բացի բազմաթիվ արխիվային նյութերից /Յայաստանի ազգային արխիվ/, բացի թանգարանային փոքրիշատե վերծանված այնքան թանկարժեք

էջերից /ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան/, նաեւ մեկ այլ, հետաքրքիր էլ է բացվելու գրողի օրագրային լայնահուն ճանապարհին. հայտնաբերվեցին Լեն Կամսարի անտիպների մեկ տասնյակից ավելի էջեր, որոնք ակամա դուրս էին մնացել երգիծաբանի «Սոցիալիզմի Սահարա» ժողովածուից /1959թ./: Այստեղ պետք է հնչի կոչս՝ Լեն Կամսարի գործերը, ի՞նչ իմանաս, գուցե եւ մոտ ապագայում վերահրատարակողներին. գրողի այս էջերը, որոնք կարելի է գտնել միայն իմ աշխատության Յավելվածում, անպայման պետք է տրամաբանական տեղ ունենան հեղինակի օրագրերի ժողովածուում. չէ՞ որ առանց այն էլ նրա ձեռագրերը մեզ հասել են ոչ ամբողջական /Չեկայի բարբարոսության, խոնավության, մկների բաժին դառնալու եւ գուցե նաեւ այլ պատճառներով/, գոնե փորձենք պահպանել այն, ինչ ունենք:

Ակամա շեշտեցի գրողի անտիպները՝ գուցե ընթերցողի ուշադրությունը բեւեռելու առաջին հերթին հենց դրանց:

Գրքում պատմական երեք ժամանակաշրջաններ են՝ 1920-ական թվականներ՝ մինչեւ բռնադատում, մինչեւ մեծ հատուցում

/«Մահապուրծ օրագիր»/, բուն հատուցում գրողի /եւ ոչ միայն/ բանտ-աքսորի տարիները /«Բանտիս օրագիրը»/, եւ ապա «առաջնորդի» մահին հաջորդող նոր ժամանակների՝ նոր սպասելիքներով /«Կարմիր օրեր», «Սոցիալիզմի Սահարա», «Չալոցք»/. ահա հեղինակի բոլոր մտքերին իմ գրականագիտական անդրադարձը՝ հենված պատմահամեմատական մեթոդի, հոգեբանական վերլուծությունների՝ զուգորդումների վրա՝ պայմանական տարանջատումներով:

«Լեն Կամսարի օրագրային արձակը» գիտական աշխատության տպագրությունը երաշխավորված է ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի կողմից: Գիրքը նախատեսված է ինչպես հայ գրականության մասնագետների, ուսանողների, այնպես էլ Լեն Կամսար գրողի, մարդու եւ քաղաքացու բոլոր գաղափարակիցների համար:

....Կարո՞ղ եք «գաղափար ունենալ առյուծի մեծահոգության մասին»՝ հաղորդակիցը դառնալով մեծ երգիծաբանի բազմախորհուրդ մտքերին...

ԿԱՐՈՒՆ ՄԱՐԻՈՂՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու

ՆԱՀԱՆԳԱԴԵՏ ՈՉԽԱՐԸ

Քոստոս ոչխարն անգրագետ Դարձավ մի օր մահանգապետ: Չնայած տառ չէր ճանաչում, Բայց գործի մեջ լավ էր աճում, Քանզի ինչ-որ վերից ասվե՛ր՝ Ոչխարը հեզ կկատարեր: Լինելով բուք, մտամոլոր՝ Նա վարձերն էր գանձում բոլոր: Նախատեսված ժամանակին ընկեր դարձավ ավանակին, Ծանոթացավ օրենքներին, Կաշառքների հոսքին բերրի. Կաշառքն էր լուծում ամեն հարց, Կաշառքն էր տալիս ջուր ու հաց: Այս գործի մեջ նա հմտացավ, Շուտով պատգամավոր դարձավ: Եվ դմակը աճեց նրա, Եվ բուրդ բուսնեց քոսի վրա, Այժմ էլ գլխում նոր միտք հոսեց՝ Կոռուպցիայի դեմ նա խոսեց:

Ոչխարությունն այս ունի աճ, Տարածվում է այն ծախ ու աջ:

Ոչխարն ամոթխած, Չայրույթը պահած՝ Այծի ականջին Կամաց շշնջաց. -Դու չե՞ս ամաչում, Մորուքավոր այծ, Որ ման ես գալիս Միշտ հետևող բաց:

Այծը մորուքն իր Շարժեց վեր ու ցած, Հեզնող ոչխարին Դարձավ՝ մկկաց. -Քոնն էլ, ա՛յ ոչխար, Բաց կլինեք, բայց Կեղտոտ դմակիդ Տակ է թաքնված:

Թավ, խիտ անտառում Կանգնած էր բարդին, Օձը սողալով՝ Հենվեց գագաթին: Ֆշշաց վերևից. -Լավ է վերևում. Ամեն ինչ չնչին, Փոքր է երևում:

-Չնչինը նա է,- Ոգնին է ծայրում,- Նա, ով սողալով Վեր է բարձրանում:

-Մայրի՛կ, սիրելիս, Շտապի՛ր, արի տես, Մորաքույրը իմ Հյուր է գալիս մեզ: -Ջիանդամ թե չի գա, Դեմ վազող չկա: -Ծանրոց կա մի մեծ Նրա ձեռքերում. Դա տորթ է հաստատ, Որ մեզ է բերում: Շտապի՛ր, բալես, Շատ ուրախ եմք մենք, Մորաքրորդդ չդիմավորե՞մք:

ԲԱՐԵԳՈՒԹ ԳԱՅԼԸ

Նստել է խղճիս Հանցանքն իմ մեծ. Իմ ճանապարհին Գառնուկ հանդիպեց. Նորից սխալմամբ ես մեղք գործեցի, Որդուն իր մորից ես բաժանեցի:

Տարա շոյելով, Պահում եմ որջում, Բայց արի ու տես Ձղջացի վերջում: Գնամ ետ, ասեմ, Որ իր հեզ մաքին Գա տեսակցության Սոված իր ծագին:

Արծվին լացով Դիմեց մի խեղճ հավ. -Էն չարածճի բազեն անիրավ, Ամենը իմ ճոխն Տարավ ու կերավ: Իսկ արծիվն ասաց Գանգատվող հավին. -Թագավորն եմ ես Երկնային խավի Եվ չեմ զբաղվում Գործերով հավի:

Գնա՛ւ դիմիր Բողոքը ուրուրին, Կհայտնաբերի Կորած բարուրիդ: Ե՛տ դարձիր, Ինձ մի՛ պարսավիր, Ու գրեց հավին Պաշտոնական գիր. «Հարցդ լուծելու՝ Ուրուրին դիմիր»:

Եզը տանջվում էր մի հարցով. -Դարդն աշխարհի ինչո՞ւ է ծով, Ամենուրեք լաց է ու կոծ, Ահասարսուռ կրակ ու բոց: Հոգիս վկա, այս չարիքի Սկիզբը կա, վերջը չկա: Էջը ծայրեց. -Քեզ ինչ, ա՛յ եզ, Լսիր, թե ինչ կասեմ ես քեզ: Նոր լծի տակ քեզ մի՛ մաշիր, Խելոք, խոնարհ լուծո՛ք քաշիր:

ԳԱՅԼՆ ՈՒ ԽՈՅԸ

Գայլն այն ծանոթ առակի, Նույնքան մեմզ ու անհոգի, Այս անգամ էլ առվի մոտ Ձգաց գառան դյուբիչ հոտ: Ու մոտեցավ աներեր, Տեսավ՝ հասուն մի խոյ էր: Մեկից ցնծաց հոգով ժանտ, Չէ՞ որ խոյի միսն է շատ: Բայց գայլն ինչպե՞ս ճանաչեք, Որ խոյն այլևս գառ չէր: Երբ գայլաբար հոխորտաց, Մոլեգնեց խոյն ու ասաց. - Ես էլ չլնի հերվանը, Չեմ մոռացել էդ բանը, Երբ առվակի մոտ, այստեղ, Կերար եղբորն իմ անմեղ: - Ես չեմ եղել, ա՛յ ոչխար, Ուրիշ գայլ էր անպատճառ... - Մեկ է, նա էլ էր ձեզնից, Դու չես կարող խաբել ինձ,- Ասաց խոյն ու խոյացավ, Համակ քեն ու դիս դարձավ, Պոզահարեց բիրտ չարին՝ Փրկելով գառ-ոչխարին:

Բարին թե գեմք ունենա՛ Չարն իր որջում կմնա:

ՇԱՆ ԳԱՆԳԱՏԸ

Առավոտից մինչ իրիկուն, Չունեմ հանգիստ ու ոչ էլ քուն: Գիշեր-ցերեկ սարերում հով Հոտն եմ պահում կյանքիս գնով: Հանգիստ, անհոգ՝ զարում, ամառ Արածում եմ ոչխար ու գառ: Իմ համբավը սփռում է ահ, Գայլերն եղել են սովամահ: Բայց հովիվս՝ դաժան ու չար, Մորթում է միշտ գառ ու ոչխար: Կիսվել է իմ պահած հոտը, Թուլանում են ձեռն ու ոտս: Սիրտս է ընկել կրակ-բոցը, Կաղկանձ դարձավ իմ հաչոցը: Անիծվում է հոտիս հերը, Գա՛յլն է գայլ, թե՛ իմ տերը:

ԱՔԼՈՐՆ ՈՒ ՎԱՌԵԿԸ

Շնչակտուր ու վախեցած, Թռավ վառեկը թառից ցած: Սրտատրոփ ու վազեվազ, Իրեն գցեց բակ հազիվհազ: Գտավ սիրած աքաղաղին՝ Չայնը տված իր գոռ տաղին: Ասաց,- Վա՛յ իմ խեղճ, միամիտ, Փորձանք է մեծ գալու գլխիդ: Հյուրեր եկան մեր տունը նոր, Յոթ խնամի ու մի քավոր, Եվ մեր տերը ասաց.- Որդի՛, Ե՛լ, աքլորին բռնի, մորթի: Որպեսզի այդ չարը մարենք, Ներկայացիր որպես վառեկ: Աքլորը թե. - Թող ինձ մորթեն: Թեկուզ հանեն շորն իմ հագի, Եվ ինձ դնեն թեժ կրակին, Իմ դեմքը չեմ փոխի երբեք, Ես աքլոր եմ, ոչ թե վառեկ:

Լացը կոկորդում՝ Մեղուն ժրաջան, Բռնից բողոքի Գնաց վեր՝ շրջան: Ասաց.- Իմ լեզուն Երբեք չի ստում, Ես շատ բողոքներ Ունեմ իմ սրտում: Իմ բերած մեղրից Չունեմ ես օգուտ, Գողանում եմ այն



ՍՈՒՔԻԱՍ ԱՂԱԼԱՐՅԱՆ

Բռները անգուր: Պաշտոնյա անձինք, Լուրջ ու միաձայն, Հարցերը լուծել Մեղվին խոստացան: Բայց այն օրվանից Դեռ մինչև այսօր Մեղուն բռնի դեմ Մնում է անզոր: Քանզի վերևում, Երբ տեղն իմացան, Իրենք էլ հանկարծ Մեղրի տեր դարձան:

Տգտզան ձայնով, Մի խղճուկ մոծակ, Նստած էր փղի Վզին համարձակ:

Հանկարծ փղի դեմ Մի գայլ հայտնվեց, Որի փորն արդեն Անում էր վեց-վեց:

Բայց երբ նա տեսավ Փղին ահավոր, Թեքեց իր ճամփան Վախից անսովոր:

Սոճակը տզգաց. - Տեսե՛ք,- պարծեցավ,- Թե գայլը ինձնից Ինչպե՛ս վախեցավ:

Ա՛յս հարցերի այսօրվա՛ պատասխանները...

Լուսինե Աղաջանյան -Քչերի հետ կարելի է զրուցել ու ըմբոստանալ մի հարցազրույցի չափ նեղ սահմանների դեմ: Քչերին լսելուց հետո կարող ես ափսոսել, որ լսածդ ավելին է լինելու, քան գրի առածդ, և միայն քչերը կարող են քեզ որոնումների մղել այնտեղ, ուր պատասխանները հարցեր չեն փակում, այլ ներկայանում են ընդամենն իբրև պատասխան-տարբերակներից մեկը. մտորիր ու ու գտիր մյուս տարբերակներն ինքդ, եթե ոչ՝ վերադառնալու ես այս զրուցակցիդ մոտ, որ շարունակես նույն հարցը...տալ: Բանն այսօր այսպիսին է, վաղմ՝ այնպիսին:

Ես սկզբի ու վերջի սահմանաքարեր էլ չկարողացա դնել իմ հարցերի հերթագայության մեջ, որովհետև Գառնիկ Սարգսյանի համար այդ երկուսը հարատև շրջապատույտի մեջ էին, ուստի ճանապարհի կեսից իրեն մոտեցած մի անցորդի նման, հարցրի:

-Որտեղի՞ց եք գալիս և ո՞ր եր գնում:

Գառնիկ Սարգսյան-Մի խոսքով՝ յո՞ երթաս, հա՞...Գալիս եմ շատ խորքերից՝ իմ հայրական ու մայրական պապերի գեներից: Ի դեպ, Սուրբ զբերում մի քանի մաքուր տպագիր էջեր կան, որտեղ կարող ես գրել քո տոհմի կամ ընտանիքի պատմությունը: Ու մեր տանը պահպանվող այդպիսի գրառմամբ Սուրբ Գիրքը 500 տարեկան է: Մերոնց հետ ես եկել եմ երգրումից, պապերս քահանաներ են եղել: Ես կարծում եմ՝ եթե մեկը փորձի պարծենալ իր նախնիներով, նույնն է, որ նա պարծենա, որ ծնվել է ուրբաթ օրը: Կան բաներ, որ մեր ձեռքերումը չեն: Ամեն մեկն ինքն իրեն պիտի կերտի ու զուցե միայն դրանով իրավունք ունենա պարծենալու: Պիտի ապրել այնպես, որ հետ մայելուց չանաչես, ներկայում վստահ զգաս, իսկ ապագային մայես հույսով:

Լ.Ա.-Յիմա վախեցնող հարց եմ տալու. ո՞վ կլինեիք Դուք, եթե աշխարհիս երեսին չլինեիր հոգևոր մշակույթը...

Գ.Ա.-Ո՛չ ես, ո՛չ էլ որևէ մեկը չէին լինի, մարդկությունը կվերանար: Ես ունեմ հզոր պատկերացում, բայց հիմա չեմ պատկերացնում, թե ո՞վ կլինեի ես առանց հոգևորի: Լավ. միգուցե ժամագործ...Նրանք մարդիկ են, որոնք գլուխները կախ, նստած իրենց անշուք սենյակներում, ամեն օր ապացուցում են էյձշտեյմի հարաբերականության տեսությունը: Ժամագործները ժամանակին ընթացք տվողներ են...Թերևս ես ժամագործ լինեի:

Լ.Ա.-Ձեր հաղորդաշարը կոչվում է՝ «Ես և դու», որտեղ Դուք ես-ն եք: Իսկ ո՞ր կողմում եք Դուք մեր զրույցի մեջ:

Գ.Ա.-Ես էլի եմ եմ: Հաղորդման գաղափարը Վազգեն Պահլավյունունն է, որին ես շատ շնորհակալ եմ շատ բաներում: Նա քաղաքի համար հիմնական նախագծեր է արել: Իսկ հաղորդումը թույլ է տալիս, որ իմ հյուրերի ես-ն ավելի հզորանա ու բացահայտվի: Նման ես-երին հարկավոր է ոգևորել ու ներկայացնել հասարակությանը:

Լ.Ա.-Յույն փիլիսոփաները, հետո նաև ֆրանսիացիները սեփական գործերը սիրում էին ներկայացնել հարցազրույցներով: Միգուցե ենթագիտակցորեն հենց այս հանգամանքն է պատճառ դարձել «Ես և դու»-ի ստեղծման:

Գ.Ա.-Հենց հիմա էլ մենք դրանով ենք զբաղված: Այո՛, որովհետև երկխոսությունների ժամանակ շատ հետաքրքիր մտքեր են բացահայտվում նրանց մեջ, ովքեր ունակ են մտածելու, ունեն ասելիք: Ավելի շահեկան է երկխոսել ծույլերի հետ ու դուրս բերել նրանց քնած մտքերը, որովհետև եթե ծույլ չլինեին, հաստատ իրենք գրի կառնեին դրանք:

Լ.Ա.-Ի՞նչը կարող է խթանել, որ մոր գործ սկսեք:

Գ.Ա.-Կնոջս սիրալիր հայացքը...

Լ.Ա.-Նա գիտի՞ որա մասին...

Գ.Ա.-Դե թող իմանա...

Լ.Ա.-Իսկ ի՞նչ ֆիլմեր կային Ձեր գլխում, որոնց «բեկորները» հաղորդումների մեջ իրացվեցին ու այդպես էլ չնկարվեցին...

Գ.Ա.-Ֆիլմի գաղափարները շատ-շատ են, դրանք կերիքեն ամբողջական ֆիլմեր դառնալուն: Հիշենք Ֆաուստին, որը Մեֆիստոֆելին պատասխանեց՝ «Ես փոքր ինչ ծեր եմ, որ միայն կանանց մասին մտածեմ, բայց դեռ շատ երիտասարդ եմ, որ ընդհանրապես իրաժարվեմ նրանցից»: Ես դեռ կարող եմ ու պիտի նկարեմ ֆիլմեր: Ինչպես սերը, այնպես էլ մտքերը շատ լինել չեն կարող, դրանք անսահման են:

Լ.Ա.-Ո՞ւմ են հասցեագրված Ձեր ֆիլմերը:

Գ.Ա.-Կնոջս...Բոլորը...

Լ.Ա.-Ուրեմն, բացի գաղափարական ասելիքից, Ձեզանից է՞լ ինչ կա այդ ֆիլմերում...

Գ.Ա.-Ինձանից հուշեր էլ կան, ապրումներ, երախտագիտության զգացում՝ ուղղված ծնողներին, ազգին, ընկերներին...

Լ.Ա.-Իսկ ի՞նչ հարաբերությունների մեջ է Ձեր գործունեությունը Ձեր կյանքի հետ...

Գ.Ա.-Անհաշտ եմ: Կյանքն այնպիսին է, որ հաճախ ստիպում է անել բաներ, որ չես ուզում: Հիմնական մի անելիքոտ կա, որ հաճախ եմ հիշում... Սեկը երազում է դառնալ աշխարհի ամենուժեղ իրեշ բռնողը, որն իրեն հաջողվում է լինել 20 տարիների ընթացքում: Մի օր, երբ գնում է անծանոթ մի քաղաք, նրան հարցնում են, թե ինչ մասնագիտություն ունես: Նա պատասխանում է, որ ինքն աշխարհի ամենաուժեղ իրեշ բռնողն է: Բայց մեզ մոտ, ցավոք, իրեշներ չկան՝ ասում են նրան: Երբեմն ես ինձ զգում եմ այդ իրեշ բռնողի նման, որի կարիքը չունի հասարակությունը:

Դարերով մեր ազգը պահել են երեք սյուների՝ կրթություն, ընտանիք ու հավատ: Այսօր այդ երեք սյուները կացնահարում են հենց նրանք, ովքեր կոչված են պահպանելու ու հզորացնելու դրանք: Քեզ անօգնական ես զգում, ավելորդ, իրեշ բռնող ես համարում: Մյուս կողմից էլ հասկանում, որ իրավունք չունես հուսահատվելու ու շարունակում ես պայքարել:

Լ.Ա.-Է՛հ, գուցե ավելի պրագմատիկ լինել է հարկավոր, գուցե սկզբում իրեշ ստեղծել է հարկավոր ու հետո բռնել: Ի վերջո ինչո՞ւ են այսքան լողզված մյուսականի ու հոգևորի սահմանները...

Գ.Ա.-Այ հենց դրա համար էլ հզոր եմ ու քաղաքակիրթ այն ազգերն ու երկրները, որոնք հստակ պահում են այդ երկուսի սահմանները...Երբեք թույլ չեն տալիս, որ թզաչափ անգամ մյուսականը սողոսկի հոգևորի սահման, քանգի լավ գիտեն, որ այն՝ հոգևորը արագ կուլ տալու հակում ունի:

Լ.Ա.-Լավ, եկեք պատկերացնենք մի լսարան, որի առջև կանգնած Դուք պարտավորություն ունեք պատմելու Ձեր մասին: Որտեղի՞ց կսկսեք...

Գ.Ա.-Իմ անուն-ազգանունից:

Լ.Ա.-Միգուցե ազգանուն-անունից...

Գ.Ա.-Ո՛չ, անուն ազգանունից: Ես կասեմ, որ Գառնիկ Սարգսյանը զոհվել է 26 տարեկան հասակում, 1944 թվականին: Ու ես հասկացել եմ, որ շատ կարևոր է լինել արժանապատիվ, ապրել նաև այն մարդու փոխարեն, ում ապրել-զոհվելու շնորհիվ դու կաս այսօր: Ահա թե ինչից կսկսեմ...

Լ.Ա.-Ձարմանալի զրույց է, պարոն Սարգսյան: Դուք պատասխանում եք նաև հարցերի, որոնք ես ուզում էի տալ, բայց չտվեցի: Փաստորեն ամեն մի իսկական զրույց, որին հոգով ես պատրաստվում, սկսվում է դեռ նախապատրաստական փուլում ու մարդու հետ զրույցն իրականում էներգետիկ դաշտերի շփում է, որը կարող է սկսվել արդեն իսկ նրա մասին մտածելիս:

Ի՞նչ է նշանակում լինել ռեժիսոր:

Գ.Ա.-Դե, այստեղ հեծանիվ չես հայտնաբերի: Այն հզոր մասնագիտություն է, նշանակում է լավ ղեկավար լինել մի թիմի համար, որի ձևավորման, կայացման, աշխատանքի ու ցանկացած կադրի համար դու ես պատասխանատու:

Լ.Ա.-Կա՞ մի գիրք, որը կուզենայիք Դուք գրած լինել:

Գ.Ա.-Ո՛չ, չկա: Ես ուղղակի հիանում եմ հեղինակներով, նրանք իմ բարեկամներն են, որոնց ամեն երեկո իրավիրում եմ իմ սենյակ, մեկ գավաթ թեյ, կոնյակ, գինի խմելու: Նույնիսկ գիտեմ, թե ո՞վ ինչ է սիրում խմել: Օրինակ՝ Էկզյուպերիի հետ ես միայն սուրճ եմ խմում:

Լ.Ա.-Կաթո՞վ...Նա հաստատ այդ ըմպելիքի ավելի փափուկ տարբերակը կնախընտրե՞ր...Իսկ համաձա՞յն եք Սարգսյանի հետ, որն ասում էր, թե լավ գիրքը լավ մարդն է զրույց...Առաջնորդվո՞ւմ եք նման սկզբունքով գիրք ընտրելիս...

Գ.Ա.-Ո՛չ, համաձայն չեմ ու բացարձակ նման սկզբունքով չեմ առաջնորդվում: Այնքան վատ մարդիկ գիտեմ, որ հիմնալի արվեստ են ստեղծել, լինում է նաև հակառակը: Ու առհասարակ, ես նախընտրում եմ, որ վատ մարդը լավ գիրք գրի, քան հակառակը: Կամ ի՞նչ է նշանակում լավ ու վատ: Դրանք խիստ սուբյեկտիվ են: Այն 4 կույրերի առակը վկա, երբ 4-ն էլ մոտենում են փղին ու շոշափում, ամեն մեկն իր պատկերացումով ասում է, թե ինչ կարող էր դա լինել: Նայած որ կողմից կնայենք համձարին, ըստ այդմ էլ կծանվորվի մեր գնահատականը նրա նկատմամբ...

Լ.Ա.-Յետաքրքիր է, Ձեր երևակայության մեջ կա՞ն քարացած պատկերներ, թե դրանք միշտ շարժման մեջ եք տեսնում...

Գ.Ա.-Իսկ այդ մասին չեմ էլ մտածել...

Լ.Ա.-Ո՞րն է ամենաուժեղ հոգեբանական ասելիքը, որ հնչել է Ձեր ֆիլմերում...

Գ.Ա.-«Սուրբը» կարճամետրաժ ֆիլմի ասելիքն է: Նա հարցեր է բարձրացնում, թե ո՞վ է հավատի մարդը, ո՞վ է հոգևոր մարդը: Հոգևոր կերպարում խաղում էր իմ լավ ընկեր բանաստեղծ Ղևոնդը: Հրաշալի էր խաղում... Իմ ֆիլմերից շատերը վաճառվեցին. այդ ֆիլմն էլ...

Լ.Ա.-Չաղբատացա՞ք...Չպակասեցի՞ք դրանից հետո...

Գ.Ա.-Հէ, ինչո՞ւ...Ստեղծագործությունը շնչելու պես մի բան է: Ծնչում ես, թոքերդ լցնում թթվածնով, հետո պիտի արտաշնչես ու դուրս տաս, հետո էլի շնչես ու արտաշնչես: Եթե չդատարկես թոքերդ, մոր շունչ քաշելու համար տեղ չի բացվի:


Լ.Ա.-Սովորություն ունե՞ք Ձեր գործունեության մեջ տարեկան ամփոփումներ անելու...

Գ.Ա.-Ո՛չ, որովհետև իմ կյանքը մի տարի է. սկզբից մինչև վերջ: Ի՞նչ է ամիս ու տարի ասվածը. ուղղակի արհեստական բաժանում: Տիեզերքում նման բան չկա: Հոգևոր մարդը սկիզբ ու վերջ չունի...



Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի կինոարվեստի ամբիոնի վարիչ, ռեժիսոր Գառնիկ Սարգսյանի հետ զրուցում է բանաստեղծուհի, արձակագիր

Լուսինե Աղաջանյանը:



Լ.Ա.-Կիսուս՞ք Հայրենիքի մասին:

Գ.Ա.-Խոսել հայրենասիրությունից անբարոյական երևույթ է. քննարկման ենթակա չէ, ամեն մեկի պարտականությունն է՝ լինել հայրենասեր, իսկ այն մասնագիտություն դարձնել, շահարկելը կարելի է համեմատել մարմնավաճառության հետ: Ես չեմ էլ հասկանում հայրենիքը լքողների արդարացումները: Հայրենիքը վարձու բնակարան չէ, որ կարելի է փոխել վատ հարևանների պատճառով: Ինձ համար հայրենիքիս սահմանները Կիլիկյան Հայաստանով ու Ուրմիա լճի արևելյան ափով են անցնում: Իսկ հոգևոր հայրենիքս տիեզերական սահմանում ունի. անսահման է:

Լ.Ա.-Իսկ փոքր հայրենի՞քը...Գյումրու համդեպ, որտեղ ծնվել եք, ի՞նչ պարտք ունեք տալու: Մանավանդ այս տարի, երբ աղետի 30 տարին է լրանում:

Գ.Ա.-Էլի պիտի հիշեմ Վազգեն Պահլավյունուն, որը մի անգամ հողված գրեց՝ «Մենք մեր քաղաքին տոն ենք պարտք» վերնագրով: Ես միայն կավելացնեի՝ տոներ: Պարտքս ամեն օր եմ տալիս իմ աշխատանքի, քաղաքացիական դիրքորոշման, զրույցների, իմ կյանքի, փողոցում քայլելու ժամանակ: Կուզենայի, որ արվեստագետները համախմբվեին ու իրենց ձայնը լսելի դարձնեին ողջ հանրապետությունով մեկ, որ ստիպեին իրենց հետ հաշվի նստելու երկրի ղեկավարներին, գոնե մշակույթի բնագավառում...

Լ.Ա.-Կյանքն ինչի՞ փնտրտուք է Ձեզ համար...

Գ.Ա.-Սիրո...Ես ամեն օր սիրահարվում եմ, նույն կնոջը. իմ կնոջը...

Լ.Ա.-Իսկ կա՞ հարց, որին միշտ երազել եք պատասխանել ու այդպես էլ չեք ստացել:

Գ.Ա.-Ո՛չ...Լավ հարցեր էին...



ԿԱՆԶ... ՈԳՈՒ, ՄՏՔԻ, ՀԱՂԹԱՆԱԿԻ

**«Հայրենիքի համար ապրում և մեռում է միայն ոգու մարդը»:
Գարեգին Նժդեհ**

Հունվարի 29-ին ԿԳՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի հետ համատեղ կազմակերպել էր «Կանչ... ոգու, մտքի, հաղթանակի» խորագրով միջոցառում՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 26-ամյակին:

Միջոցառման նպատակն էր արժևորել Հայոց բանակի դերը՝ որպես պետականության և անկախության պահպանման երաշխիք, նպաստել դեռահասների և ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ոգեշնչել մատաղ սերունդին բաջարի զինվորների օրինակով:

Միջոցառումն ազդարարվեց պատվո պահակախմբի կողմից ՀՀ պետական դրոշի հանդիսավոր ներսերումով, որից հետո հնչեց ՀՀ օրհներգը՝ «Ընտանիք»

Լույս տեսավ ՀՀ ԳԱՍ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի հրապարակման XX հատորը՝ 20 տպագրական մամուլ ծավալով, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ եւ ինքնատիպ նախաբանով՝ ուղղված պարբերականի ընթերցողներին: Անդրադառնալով գիտական այս պարբերականի դերին ու նշանակությանը՝ արժեւորվում է հայագետների շրջանում նրա վաստակած հեղինակությունը՝ որոշակի գեղագիտական սկզբունքների ու բարի ավանդույթների շնորհիվ: Հա-

տուկ կարեւորվում է պարբերականի դերը ՀՀ կենտրոնի գիտական կազմի գործունեության մեջ. «Այն ավելին է, քան ինչ-որ ժողովածու, այն իր ինքնության մի մասն է, իր հպարտությունը, շատերի համար՝ իրենց գիտական կենսագրության սկիզբն ու ընթացքը: Նրա հատորներում տեղ են գտել Կենտրոնի գիտաշխատողների երեք հարյուրից ավելի գիտական հոդվածներ, հրապարակումներ, հաղորդումներ: Այդ հատորներում «հյուրընկալվել են» նաեւ համրապետության բազմաթիվ անվանի բանագետներ ու ազգագրագետներ, պատմաբաններ ու հնագետներ, ակադեմիական եւ բուհական համա-

կարգերի երիտասարդ գիտական կադրեր, արտերկրի շուրջ հինգ տասնյակ հայ եւ այլազգի գիտնականներ»:

Հրեյաճանական հատորում տեղ են գտել 32 գիտական հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ՝ նվիրված հայագիտության, առավելապես՝ շիրակագիտության հիմնարար ուղղություններին՝ մարզի տարածքում նորահայտ հնագիտական հուշարձանների ուսումնասիրությանը, Ախուրյան գետի ավազանի մ. թ. ա. 1-ին հազարամյակի հնագույն պատմությանը (ցեղեր, ցեղային երկրներ, սովորույթներ, հավատք, առասպելաբանություն), Շիրակի նոր եւ

նորագույն պատմությանը, Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրու նյութական ու հոգեւոր մշակույթին, պատմաազգագրությանը, աղետի գոտու ազգահոգեբանական հետազոտություններին ու բանահյուսությանը, Շիրակի ժողովրդական, աշուղական եւ կոմպոզիտորական երաժշտական ժառանգությանը: Հատորում ծավալուն տեղ են գրավել գրականագիտական եւ լեզվաբանական տարբեր թեմաներ արծարծող հրապարակումները:

Հասմիկ Հարությունյան



Ուսանողները և կենտրոնի մարտական արվեստի խմբակի սաները ցուցադրական վարժանքներով ներկայացրին ռազմագիտություն և ֆիզիկական պատրաստվածություն առարկաներից ձեռք բերած կարողությունները:

Միջոցառման մասնակիցները ներկայացրին պատերազմների բովանդակությամբ ծրագրված 26-ամյա Հայոց բանակի կազմավորման պատմությունը՝ իմաստավորելով Հայրենիք, Անկախություն, Ձինվոր վեհ գաղափարները:

Հրավիրվածները արտահայտեցին իրենց տպավորությունները, կարևորեցին նմանատիպ միջոցառումների կամակերպման

անհրաժեշտությունը, զինծառայողներին և նրանց ծնողներին հոգեպես աջակցումն ու մեծարումը:

«Որպես հայ ազգի արժանի զավակներ՝ պարտավոր ենք բարձր պահել հայ լինելու կոչումն ու պատիվը»։ այս պատրաստական մղումով հայրենիքի պաշտպանության սուրբ գործը շարունակող ապագա զինվոր սաները և ուսանողները խոստացան հետեւել հերոս մարտիկների օրինակին՝ անահանջ պայքարել ազգի ու հայրենի սահմանների խաղաղության և ապահովության համար:

Ս. Էլբակյան



ՀԱՍՄԻԿ
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ԿԻՍԱԼԿԱ ՕՐ

Հնիհն, դրսից մի մեծ չափաբաժին թթվածին կուլ տալով, անվառ աստիճանները մեկընդմեջ արհամարհելով (միգրացե շտապում էր) հասավ իրեն կարոտած դռանը: Ձեռքը տանելով

գրպանը, հանելով չուգունե մեծ բանալին, մթան մեջ մի քանի անգամ ետ ու առաջ անելով՝ գտավ անցքը, երկու շրխոցից հետո բանալին դրեց գրպանը: Միջանցքի աղոտ լույսը վառելուց հետո, արագ-արագ հոգնած կոշիկները հանելով, տարիների խնամք տեսած վերարկուն կախելով քիթը վեր տնկած կախիչից, մոտեցավ հայելուն, աջուձախ երեսը տարուբերելով՝ մտավ լոգարան: Ցնցուղից ծորացող հատուկենտ շիթերը հուշեցին՝ ջուրը կտրվելու ցանկություն ունի: Աջ ձեռքով պտտելով ծորակը, ձախով փորձեց բացել դուռը ու ականջին հասավ ծանոթ երաժշտություն, մի պահ զգաստացավ, հրեց դուռը, դուրս եկավ: Հեռախոսն էր, որը երբեմն-երբեմն հիշեցնում էր զարթուցիչի գոյությունը:

Սպիտակ խալաթը վրա բերելով՝ նայեց հայելուն, իրեն գտավ մեջը: Ձեռքով հրեց չենթարկվող սաթե մագերից առաջ եկած մագափունջը, նստեց հավատարիմ,

կաշե սև բազկաթռչին, սկսեց ծխել:

Որսալով օդում ծխի օղակաձև քուլաները՝ հերթով անցավ նրանց միջով: Կիսափակ աչքերը թեթևակի ծակծկոցից բացվեցին: Ծխախոտի մոխիրը մի փոքր անցք էր բացել խալաթի վրա: Ժամացույցի տկտկոցը ստիպեց նայել իրեն. ժամը տասներկուսն էր: Խոշոր ձեռքերը ամուր հեմելով բազկաթռչին՝ վեր կացավ, կիսաքուն հասավ ճեղքաբաց: Նայեց պատուհանից դուրս, մտածեց. «Ժամանակն առաջ է ընկել օրից»: Խորը հոգոց հանելով, ձեռքով շոշափելով կոկորդը՝ բարձրաձայն մեմախոսեց. «Չէ, կյանքը շնչառություն է»: Հետո մահճակալը կանչեց իր մոտ: Մահճակալը թվաց հսկա: Մրսեց, կուչ եկավ, ձեռքերով ծածկեց դեմքը: Չէ, հզոր է միտքը: Փորձեց տեսաժապավենը դատարկել օրվա սափորից:

Օրը տառապեց, հյուծվեց, ու մարդը կորցրեց օրը:

ՊԱՅԻ ԶՐՈՒՅՑ ԻՆՔՆ ԻՐ ՀԵՏ

Ո՞վ ես դու:
Ասում եմ՝ հայրդ եմ:
Իսկ ո՞ր եմ խորհուրդների,
Ինչո՞ւ եմ հպարտությունս
գրպանում ծվարել,
Ինչո՞ւ եմ հունա պղտորվել,
Երբ չկա մեղավորը:
Բիբս, որ քեզ գուրգուրում էր
իր լույս ցուլքերում,
Ինչո՞ւ որբացավ:
Մի խեղդող ձայն կանչեց
ներսիցս...
Ինչուներդ ետ վերցրու.
Նրանք ընդն են:

ԼՈՒՄԱՆԿԱՐԻ ԱՈՒՋ

Դու աջ ուսիդ հրեշտակն ես,
Ես՝ ձախ,
Ես սիրում եմ քեզ
և ոչ թե ինձ:
Դու մտածում ես...

Ես վաղուց եմ մոռացել:

Դու բացել ես
պատուհաններդ
անձրևից հետո,
Ես՝ ամուր փակել,
Դու, ծիածանին նստած,
արևն ես ցած բերում,
Ես, լուսնին նստած,
անձրև եմ մաղում:

Դու ժպտում ես ինձ,
Ես ամաչում եմ,
Դու՝ գարուն աղջիկ,
Ես՝ աշուն լացկան,
Դու փարվում ես ինձ,
Ես աղոթում եմ,
Դու լաց ես լինում,
մենք հաշտվում ենք:

Դու՝ գարուն աղջիկ,
Ես՝ աշուն լացկան:

Հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի Գրողների Միության Շիրակի
մարզային մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (0312) 5 65 97
Խմբագրական խորհուրդ
Համարի պատասխանատու՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո»
Տպագրված է «Գյումրի տպարան» ԲԲԸ
տպագրատանը
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ